ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ք-018/17

ք. Երևան 23 սեպտեմբերի 2017թ.

«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս տնօրեն Արմեն Ամիրջանյանի, որը գործում է համաձայն ընկերության կանոնադրության, մի կողմից, և **«ԱՐԻԵՍ Լիբեր» ՍՊԸ-ն**, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Կատարողին հանձնարարվում է կատարել **ԱՄՆ էներգետիկայի դեպարտամենտի աջակցությամբ ս. թ. սեպտեմբերի 25-28-ն անցկացվելիք ճառագայթային միջադեպերի արձագանքմանը նվիրված ուսումնական դասընթացի ժամանակ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն լեզուներով բանավոր թարգմանություններ:**

1.2 Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքները ու վճարել դրանց դիմաց համաձայն սույն պայմանագրի 3-րդ կետի:

2. Պայմանագրի ժամկետը

2.1 Սույն պայմանագիրը գործում է կնքման պահից մինչև **28.09.2017թ.** ներառյալ ժամկետով:

3. Պայմանագրի արժեքն ու վճարման կարգը

3.1 Սույն պայմանագրով կատարվող աշխատանքների ընդհանուր արժեքը (պայմանագրային գինը) կազմում է **1,487,000.0 /մեկ միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար/** դրամ:

3.2 Սույն պայմանագրով կատարվող աշխատանքների ավարտ և վճարման հիմք է համարվում աշխատանքի հանձնման-ընդունման ակտի ստորագրումը Պատվիրատուի և Կատարողի կողմից:

3.3 Վճարումը Պատվիրատուն կատարում է հանձնման-ընդունման ակտի ստորագրելու պահից՝ 10 օրվա ընթացքում՝ Կատարողին վճարելով ընդունման և հանձման ակտում նշված գումարը:

4. Աշխատանքների հանձնման ու ընդունման կարգը

4.1 Կատարված աշխատանքում լրացումներ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում կողմերը կազմում են երկկողմանի ակտ՝ կատարվելիք անհրաժեշտ լրացումների և դրանց ժամկետների մասին:

5. Կողմերի իրավունքները, պարտավորությունները և պատասխանատվությունը

5.1 Պատվիրատուն պարտավորվում է նախքան տվյալ աշխատանքի սկիզբը, Կատարողին փոխանցել աշխատանքի կատարման համար անհրաժեշտ նյութերը: Աշխատանքի կատարման ընթացքում լրացուցիչ տվյալների անհրաժեշտություն ի հայտ գալու դեպքում Պատվիրատուն պարտավորվում է օժանդակել դրանք ձեռք բերելու և Կատարողին փոխանցելու համար:

5.2 Սույն պայմանագրի աշխատանքների և դրանց արդյունքների տիրապետման, տնօրինման և օգտագործման իրավունքները պատկանում են Պատվիրատուին:

5.3 Պատվիրատուն պատասխանատվություն է կրում պայմանագրով սահմանված աշխատանքների արժեքը ժամանակին վճարելու համար, համաձայն սույն պայմանագրի 3 կետի:

5.4 Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի կողմից տրամադրված նյութերը չտրամադրել երրորդ կողմին:

5.5 Պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Պատվիրատուն և Կատարողը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1 Սույն պայմանագրով չնախատեսված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

6.2 Սույն պայմանագրի պայմանները կարող են փոփոխվել կամ լրացվել Հավելվածների տեսքով, որոնք կկազմեն նրա անբաժանելի մասը:

6.3 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով 2 (երկու) օրինակից, որոնցից յուրաքանչյուրն ունի հավասարազոր իրավաբանական ուժ:

7. Կողմերի իրավաբանական տվյալները.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ	**«ԱՐԻԵՍ Լիբեր» ՍՊԸ**
Իրավաբանական հասցե՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4 ՀՎՀՀ՝ 02558849	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գյուլբենկյան 43 ՀՎՀՀ՝ 00858905 Հեռ՝ +(374 91) 404532
Տնօրեն՝	Տնօրեն՝
_____ **Արմեն Ամիրջանյան** (ստորագրություն)	_____ **Ավետիք Ղուկասյան** (ստորագրություն)
«23» _____ 2017թ.	«____» _____ 2017թ.